Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

8273

ՋԻՋԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԲՈՒԼԱՏՈՎ

ՀԵՆԱԿԵՏՆԵՐԸ — ԳՅՈՒՂԻ ԲԱՅԼԾԵՎԻԿՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԾԱԿՆԵՐՆ ԵՆ

ՅԿՊՅ
Բ-95

ՊԵՏՀՐԱՏ 1931 ԵԵՐԵՎԱՆ

ЗКп3
Բ-95
11 MAR 2013
24 SEP 2006

ԳՅՈՒՂԿՈՄԲԻՋԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԲՈՒԼԱՏՈՎ

ՀԵՆԱԿԵՏՆԵՐԸ—ԳՅՈՒՂԻ ԲԱՑԼՇԵՎԻԿՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԾԱԿՆԵՐՆ ԵՆ

1008
ՅՏ-428

Համկկ (բ) կկ կազմ-հրահանգչական բաժնի
վարիչ ընկ. Բուլատովի յելույթը
Համ. կկ (բ) կկ կազմ-խորհրդակցության

1931 ԵՐԵՎԱՆ

8273

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ

Գլավլիտ 6810(բ), Հր.№1835 Պատ. 5011, Տիրաժ 5000

ՀԵՆԱԿԵՏՆԵՐԸ—ԳՅՈՒՂԻ ԲԱՅԼՇԵՎԻԿՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼՈԱԿՆԵՐՆ ԵՆ

Հարկավոր չէ խոսել այն մասին, թե ինչպիսի քաղաքական նշանակություն ունի այն աշխատանքը, որը մենք կատարում ենք հենակետերի կազմակերպման գործում: Անտարակույս, դա մեծ աշխատանք է և գործնական իրացումն է 16-րդ կուսհամագումարի այն վորոշման, որը պահանջում էր ստեղծել գյուղական մարտունակ կուսկազմակերպություն: Այս աշխատանքի հանդեպ սկսում են լուրջ վերաբերմունք ցույց տալ, տեղական կուսկազմակերպությունները յուրացրել են նրա քաղաքական նշանակությունը:

Մենք հիմ խոշոր աշխատանք ունենք արդեն կատարած հենակետերի կազմակերպման բնագավառում, հատկապես մեր հարավային շրջաններում, թեև ներկայումս չի կարելի

խոսել այդ հենակետերի աշխատանքի բովանդակության մասին ընդհատման և դադարեցման տեսակետից,— նրանք տակավին կազմակերպման ստեղծման են դառնում:

Կուսաշխատանքների հենակետեր ստեղծելու աշխատանքը հիմնականում ճիշտ է ընթանում: Ճիշտ է նաև այն, որ մարզային և յերկրային կուսկոմիտեները քննում և հաստատում են շրջկոմների կողմից կազմակերպվող յուրաքանչյուր կուսկոմը: Միևնույնժամանակ ճիշտ է այն զգուշությունը, որ ցույց են տալիս յերկրային և մարզային կոմիտեները կուսկոմներ կազմակերպելու գործում: Սդ անհրաժեշտ է եյալես հետևելու ԿԿ-ի վորոշումների կատարմանը:

Մենք կարող եյինք հիմա լայն թափ վերցնել և բազմաթիվ կուսկոմներ, հենակետեր ստեղծել, բայց մենք չեյինք կարողանա այդ կազմակերպված հենակետերն ապահովել համապատասխան վորակյալ կուսաշխատողներով և նրանց դարձնել իսկական հենակետեր: Հենակետերի աշխատանքի դեկավարման համար մարդիկ ընտրելը խոշոր հարց է, և այդ հարցը վոչ մի կերպ անտեսել չի կարելի: Հարկավոր են վորակյալ, ամուր աշխատողներ, վորոնք կարողանան դեկավարել վոչ միայն խորհանտեսության, ՄՏԿ-ի և խոշորագույն կոլտնտեսության բջիջի, այլ և նրանց միավորած մի խումբ բջիջների կուսաշխատանքները, և դեկավարել այնպես, վոր նրանք զգան այդ հենակետային կոմիտեների դեկավարությունն ու ոգնությունը:

Մենք վոչ մի ոպորտունիզմի մեջ չենք ընկնի, յեթե վորոշ զգուշավորություն ցույց տանք և հենակետերը կազմակերպենք դուցե և քիչ դանդաղ, բայց ճշտիվ, այդ հենակետերի համար իսկույն և յեթ ապահովելով աշխատողների վորակյալ կադրերի ընտրությունը:

Յես կամենում եյի կանգ առնել մի քանի հարցերի վրա, վորոնք չուշադրեցին այստեղ մտքերի փոխանակության ընթացքում և վորոնք պահանջում են անհրաժեշտ բացատրություն:

Մի քանի ընկերներ երենց ելույթներում

մասնանշում էին, որ հենակետային բջջի քարտուղարն առանձին պետք է լինի, իսկ հենակետի քարտուղարն առանձին, համատեղություն անկարելի է։ Իմ կարծիքով, ընկերները ճիշտ չեն վիճում։ Ես գտնում եմ, և այդ պետք է արձանագրել բանաձևում, որ հենակետային բջջի քարտուղարը միաժամանակ պետք է լինի նաև կուսկոմի քարտուղարը։ Այլ կերպ չի կարող լինել, որովհետև մենք չենք կարող այնպիսի կազմակերպչական կառուցվածք ստեղծել, որտեղ ունենանք հենակետային բջջի քարտուղար, իսկ դրա կողքին միաժամանակ նաև հենակետային կուսկոմի քարտուղար։ Եթե մենք դուրս գանք այդ ճանապարհը, ապա մենք կխեղաթյուրենք կուսակցության ԿԿ-ի վորոշումը։

Ի՞նչ է ասում ԿԿ-ի վորոշումը։—«Անհրաժեշտ է խորհտնտեսությունները, ՄՏԿ-ները և խոշորագույն կոլտնտեսությունները դարձնել գյուղական կուսակազմակերպության հենակետեր»։ Դարձնել— նշանակում է վոչ թե նոր ստեղծել, այլ յեղածներին տալ կուսկոմի իրավունքներ։ «Կազմակերպչորեն այդ վերակառուցումը պետք է ձեվակերպվի այնպես, վոր խորհտնտեսությունների, ՄՏԿ-ների և խոշոր կոլտնտեսությունների բջիջները կուսկոմի իրավունքներով միավորեն շրջակա գյուղերի ու կոլտնտեսությունների մի շարք գյուղբջիջներին»։

Մի քանի ընկերներ թույլ են տալիս այս ձևի մեկնաբանություն։ Նրանք գտնում են, վոր բացի խորհտնտեսությունների ու ՄՏԿ-ների բջիջներից, հարկավոր է ստեղծել հենակետային կուսկոմներ՝ առանձնապես նշանակված վճարովի քարտուղարներով։ Այդ ճիշտ չէ, դրանից վոչինչ դուրս չի գա։ Այդ հակասում է ԿԿ-ի վորոշումներին։

Միայն բարդանում է կուսկոմի ձևավորումը։ Սուտ խորհտնտեսությունների և ՄՏԿ-ների բջիջներն ընտրում էին այն կոմունիստները, վորոնք աշխատում էին անմիջապես նույն խորհտնտեսությունում կամ ՄՏԿ-ում։ Հիմա գործը վորոշ չափով բարդանում է։ Հենակետային գործող խորհտնտեսության կամ ՄՏԿ-ի կուսկոմի ընտրու-

թյանը պետք է մասնակցեն վոչ միայն խորհտնտեսության կամ ՄՏԿ-ի կոմունիստները, այլ և միավորված բջիջների կոմունիստները:

Ի՞նչ է ստացվում: Ստացվում է այն, վոր հենակետային կուսկոմի միավորած բջիջները ունենալու են բջջի բյուրոներ: ՄՏԿ-ի, խորհտնտեսության, ամուր կոլտնտեսության բջիջը, դառնալով հենակետային, չի ունենալու բջիջի առանձին բյուրո, այլ ունենալու է կուսկոմ (հենակետային), վորը պետք է ղեկավարի այն խորհտնտեսության և ՄՏԿ-ի կոմունիստների աշխատանքը, վորտեղ հենակետ է ստեղծված, և միաժամանակ այդ կուսկոմը պետք է ղեկավարի կոլտնտեսական բջիջների աշխատանքը: Կուսկոմի առանձին քարտուղար ունենալու կարիք չի մնում:

Ընտրությունները կոմունիստների ընդհանուր ժողովներում են լինելու, թե՞ դումարվելու է կոնֆերանս,— այդ կախված կլինի հենակետի միավորած կոմունիստների քանակից և յուրաքանչյուր առանձին

դեպքում վճռվում և յերկրային կամ շրջանային կոմիտեյի կողմից: Կոնֆերանսը կամ ընդհանուր ժողովը կընտրի կուսկոմ, վորը միավորելու և ղեկավարելու է ոչ միայն խորհտնտեսության կամ ՄՏԿ-ի վողջ հասարակական ու քաղաքական գործունեությունը: Միաժամանակ նա ղեկավարելու է, ինչպես ասացի, միավորված բջիջների աշխատանքը:

Զապայեվյան շրջանի ընկերներն ասում են, վոր իրենց շրջանում կա 13 յեռային բջիջներ ունեցող խորհտնտեսություն: Ի՞նչ կա վոր, թող լինի այդպես: Այդ 13 բջիջին ավելացրեք շրջակա 5—6 բջիջ ևս, վորը կմիավորի կուսկոմը, և այն ժամանակ ձեր խորհտնտեսությունը կունենա 18 կամ 19 բջիջ:

Անտարակույս, կուսկոմի քարտուղարի աշխատանքը կբարդանա, և բարդանում է նրանով, վոր աշխատանքի մասշտաբն ավելի մեծ կլինի, և հարկավոր կլինի լրացուցիչ կերպով ղեկավարել նաև այն բջիջներին, վորոնց առաջ չեր ղեկավարում, բայց

միաժամանակ մենք ձեռք կբերենք այն, որը խորհրդային կուսակցության կուսակցությանի փորձը կփոխադրվի այն կոլտնտեսական ու գյուղական բջիջներին, որոնք միավորվում են կուսկոմի կողմից: Դրանումն է հենակետերի կազմակերպման աշխատանքի իմաստն ու բովանդակությունը:

Ցերկրորդ դիտողությունը վերաբերում է ղեկավարության հարցին: Հենակետային կուսկոմները պե՞տք է արդյոք ղեկավարեն շրջկոմ խորհուրդների, կոոպերացիայի և այլ հասարակական կազմակերպությունների աշխատանքը: Անտարակույս, այո: Սակայն, ընկերնե՛ր, պետք է հաշվի առնել այն ընդհանուր դրությունը, որ հենակետային կուսկոմները պետք է ամենից առաջ ղեկավարեն բջիջներին: Կոլտնտեսությունների բջիջները, յեթե նրանք տերրիտորյալ դիրքով զուգադիպում են գյուղխորհուրդներին, կղեկավարեն այդ գյուղխորհուրդների աշխատանքը: Նույնը նաև սպառողական կոոպերացիայի վերաբերմամբ:

Հենակետերի կողմից զոզչ խորհրդային

հասարակայնությանը ղեկավարելու գործը պետք է անցկացնել միացյալ բջիջների միջոցով, զոչ մի չափով չդիմազրկելով նրանց: Պետք է ձգտել բջիջների շուրջը ստեղծելու կուսակցական և անկուսակցական ակտիվ, բջիջների գործնական աշխատանքի ընթացքում ամեցնելու և պատրաստելու նոր կադրեր: Բայց դրա հետ միասին հենակետային կուսկոմը պատասխանատու յե նաև տերրիտորիայում մտնող հասարակական կազմակերպությունների աշխատանքի համար: Նա պարտավոր է իմանալ, թե ինչպես են աշխատում գյուղխորհուրդները, կոոպերատիվը, կոլտնտեսությունը, նա կարող է և պետք է վերացնի նրանց աշխատանքում յեղած թերությունները և ժամանակի նրանց գործը կանոնավորելու համար:

Անհրաժեշտ է լսել գյուղխորհուրդների, սպառողական կոոպերացիայի զեկուցումները նրանց աշխատանքի մասին: Բայց սրանով չպետք է շատ տարվել: Ամբողջ աշխատանքը զուր պետք է կատարեք բջիջների միջոցով և

սակայն, վոր բջիջները ղեկավարեն և՛ գյուղխորհուրդներին, և՛ կոոպերացիային, նրանց ոգնություն ցույց տալով աշխատանքի ընթացքում: Կան սպառողական միություններ և այլ տնտեսական ու հասարակական կազմակերպություններ, վորոնք մի քանի գյուղխորհուրդ են ընդգրկում: Մանր կոլտնտեսական բջիջը վոչ մի չափով չի կարող ընդգրկել այդպիսի կազմակերպությունների վողջ աշխատանքը, և նրանց անմիջական ղեկավարությունը պետք է լինի հենակետի կուսակոմի կողմից:

Անհրաժեշտ է մեկ անգամ ևս ընդգծել, վոր հենակետային կուսակոմները չպետք է դիմազրկեն կոլտնտեսական բջիջների աշխատանքը: Դժվար է հիմա կոնկրետ կերպով նշել, թե անմիջապես ինչ պետք է անի հենակետային կոմիտեն, ինչ պետք է անեն բջիջները: Աշխատանքի պրակտիկան կմատնի այդ կոնկրետությունը: Կուսակոմի աշխատանքի կանոնադրության մեջ, վորը պետք է դրել, հարկավոր կլինի մանրամասնորեն թվարկել բջիջների և հենակետային կոմիտեի փոխ-հարաբերությունները:

Կուսկոմներին կից սեկտորներ ստեղծելու հարցը: Հարկավո՞ր է այդպիսիք ստեղծել: Ընկերներն արդեն ասում են, վոր մի քանի կուսկոմներին կից այդպիսի սեկտորներ ստեղծված են, ասել է, թե կյանքը լուծել է այդ հարցը: Ի՞նչպիսի սեկտորներ ստեղծել: Այս հարցը մենք դեռևս մշակման չենք յենթարկել, դեռևս մեծ փորձ չկա, այժմ պետք է ձեռնպահ լինել վորևե ռեգլամենտացիայից, իսկ սեկտորների աշխատանքի պրակտիկան պետք է ուսումնասիրել և տալ լրացուցիչ ցուցմունքներ: Մի բան անկասկած է, վոր կուսկոմներին կից սեկտորներ ստեղծելը և նրանց աշխատանքի ծավալումը պետք է կառուցվի ամենից առաջ գոյություն ունեցող ակտիվին կուսկոմների գործնական աշխատանքներում ոգտագործելու և այս կամ այն հարցը ավելի ուշադիր ու խորը մշակման յենթարկելու նպատակով:

Ինչ վերաբերում է թեկնածուական խմբ-

բեր ստեղծելուն թույլ այն տեղերում, ուր կուսանդամներ չկան, ապա այդպիսի իրմբեր պետք է ստեղծել: Անհրաժեշտ է նաև ստեղծել կուսկազմխմբեր և կուսկազմակերպիչներ:

Այս կուսկառուցվածքը, վոր ամբողջովին իրեն արդարացրել է արտադրության, արդյունաբերության մեջ, պետք է արմատանա նաև գյուղում: Կենտրոնական Սևահողային Մարզի ընկերները նշում էին, վոր իրենք դուրս են յեկել բջիջներն ըստ արտադրական սկզբունքի կառուցելու ուղին: Որինակի համար, կոլտնտեսական բջիջն ունի, ասենք թե, 15 կուսանդամ: Այս կոլտընտեսական բջիջը բաժանվում է ըստ նույն այն հատկանիշների, ինչպես բաժանվում է կոլտնտեսության տնտեսությունը — դաշտավարություն, անասնապահություն, բանջարաբուծություն, թռչնաբուծություն: Ուրեմն, ընդհանուր կոլտնտեսական բջիջը պետք է անջատի բջիջներ ցեխային բջիջների իրավունքներով և վորոշակի արտադրական տեսանկյան տակ, այսինքն՝ դաշտավարության ցեխբջիջ, անասնապահության ցեխբջիջ և այլն:

Հասե՞լ է արդյոք ժամանակը հարցն այսպիսի գործնական ռելսերի վրա դնելու համար,—յես անձնապես կասկածում եմ, վորովհետև չափազանց քիչ է մեր կազմակերպությունը կոլտնտեսություններում: Ցեվ առաջին ժամանակները լավ կլիներ պահպանել արտադրական, այն է՝ ըստ բրիգադների բաժանելու ներկա սկզբունքը: Ավելի լավ կլինի կազմկուսխմբեր ստեղծել ըստ բրիգադների: Վորտեղ բրիգադ կա, այնտեղ պետք է լինի նաև կազմկուսխումբ կամ կուսկազմակերպիչ: Եթե բավականաչափ կուսանդամներ չեն լինի կազմկուսխմբեր ստեղծելու համար, ապա պետք է կուսկազմակերպիչներ առաջ քաշել գոնե կարևորագույն բրիգադներում, վորոնք վճռական են տվյալ տնտեսության մեջ. իսկ դա մեծ աշխատանք է. նա պահանջում է, վորպեսզի բջիջը կուսակցական ուժերի ճիշտ գաստավորում կատարի:

Հաջորդ հարցը կուսկոմների գործերն

ստեղծելու հարցն է։ Ցեռ լիովին համաձայն եմ այն առանձին ընկերների հետ, որոնք այստեղ դեմ դուրս եկան բյուրոներ ստեղծելուն, և գտնում եմ, որ կուսկոմի բյուրո ստեղծել հարկավոր չէ, դա ավելորդ չերտ է։ Հենակետային կուսկոմի կառուցվածքը հետևյալ կերպ պետք է լինի.—Կոնֆերանս կամ ընդհանուր ժողով, կուսկոմ, ցեխբջիջներ, յեթե այդպիսիք կան հենակետային բջիջում (խորհտնտեսություն) կամ կուսխմբեր ըստ բրիգադների (կուսկազմակերպիչ), և հենակետի միավորած գյուղական ու կոլտնտեսական բջիջներ։ Կուսկոմը մեծ չպետք է լինի, 7–9 հոգի, 11–ը արդեն շատ է։ Ըստ վորում կուսկոմի կազմի 30–40 տոկոսը պետք է լինեն այն անդամները, որոնք աշխատում են անմիջապես արտադրության մեջ, միաժամանակ ապահովելով բյուրոյի կազմում միացյալ կարեվորագույն բջիջների քարտուղարների ներկայությունը։

Կուսընդունելությունը, անշուշտ, պետք է նախապես կատարի կոլտնտեսական բջիջը կամ խորհտնտեսության ցեխբջիջը, իսկ հետո պետք է հաստատի կուսկոմը։ Վերջնական հաստատման համար հարցն ուղարկվում է կուսշրջկոմին։ Ցեռ գտնում եմ, որ հասկապես ներկա մոմենտում վոչ մի դեպքում չի կարելի կուսընդունելության վերջնական հաստատման իրավունք վերապահել հենակետային կուսկոմին։ Մենք մեր կուսակցության կազմի խիստ կանոնավորում ենք անցկացնում, և այս հարցը վոչ թե կուսընդունելության տեխնիկայի, սոսկական հաշվառման հարց է, այլ չափազանց մեծ քաղաքական մի հարց, ուստի կուսընդունելության վերջնական հաստատման իրավունք վերապահել կուսկոմին մենք վոչ մի դեպքում չենք կարող։ Դա շրջկոմի գործն է, իսկ յերբորդ կատեգորիայի ընդունելությունը փոխանցվում է յերկրային, մարզային կոմիտեներին վերջնականապես հաստատելու համար։

Վո՞ւրտեղ մենք պետք է կուսկոմներ կազմակերպենք—կոլտնտեսություններո՞ւմ, թե՞ ՄՏԿ–ներում, յեթե կոլտնտեսությունն իր տեքիտորիալ դիրքով ընկնում է ՄՏԿ–ի գոր-

1008
35-428

ծունեության շառավիղի մեջ, որն, իհարկե, հաղվադյուտ բացառություն է։ Այստեղ ընկերներն այն նկատառումն են արտահայտում, թե կուսակում պետք է կազմակերպել ՄՏԿ-ներին կից։ Ես դրա դեմ չեմ առարկում, բայց ինձ թվում է, որ հարկավոր կլինի ԿԿ-ի վորոշման մեջ (խորհրդատեսություններ Համկ(բ)Կ բջիջների կանոնադրություն) մտցնել համապատասխան փոփոխություն։

Կոլտնտեսությունների Համկ(բ)Կ բջիջների կանոնադրության մեջ կա մի կետ, վորտեղ ասված է, թե այնտեղ, ուր կոլտընտեսության տերրիտորիան զուգադիպում է ՄՏԿ-ի տերիտորիային, կազմակերպվում է ընդհանուր կոլտնտեսության բջիջ, և ՄՏԿ-ի բջիջը ցեխային բջջի իրավունքներով մտնում է կոլտնտեսության բջջի մեջ։ Ըստ յերևույթին հարկավոր կլինի ուղղում մըտցնել և կուսակում կազմակերպել վոչ թե կոլտնտեսություններին, այլ ՄՏԿ-ներին կից։

Կենտրոնական Սահմանային Մարզի ներկայացուցիչ ընկ. Լյապնին ասաց, վոր մենք

կարող ենք դեմ առնել այնպիսի մի յերևույթի, յերբ ՄՏԿ-ն ընդգրկելիս կլինի 60-70 հազար հեկտար ցանք, իսկ այնպիսի շրջանում, վորտեղ ընդամենը 70 հազար հեկտար ցանք կա, կուսկոմը ՄՏԿ-ին կից կազմակերպել նշանակում է փաստորեն ստեղծել մի յերկրորդ կուսշրջկոմ։ Ճիշտ է, վոր այդպիսի կանոնադրություն բանի պետք չէ, յեթե դրան մոտենալու լինենք այնպես, ինչպես ընկ. Լյապնին է մոտենում։ Բայց մենք մեր կանոնադրության մեջ արել ենք այն վերապահությունը, վոր ՄՏԿ-ի միքանի բջիջ ընդգրկող կուսկոմը տերրիտորիալ դիրքով պետք է ընդգրկի ամենաշատը 10-15 կիլոմետր։ Յեթե մենք ասեյինք, թե կուսկոմներ կազմակերպվում են ՄՏԿ-ներին կից, և միայն այդքան, չմատնանշեյինք շրջակա բջիջների տերրիտորիալ ընդգրկումը, այն ժամանակ, իհարկե, կարող եր ըստացվել այն, ինչի մասին խոսում եր ընկ. Լյապնին. բայց այդպիսին չի լինելու։

Յենթադրենք մինչև իսկ այնպիսի դեպք, յերբ մեկ ՄՏԿ սպասարկելիս լինի ամբողջ

շրջանին, բայց չէ՞ վոր կոլտնտեսական միավորումը տերրիտորիալ դիրքով չի զուգադիպում շրջանին —մեկ կոլտնտեսություն ամբողջ շրջանում: Շրջանի ամբողջ ազդեցությունն ընդգրկող կոլտնտեսություններ բնության մեջ դեռևս գոյություն չունեն,— շրջանի տերրիտորիայում կան մի քանի թե մեծ և թե փոքր կոլտնտեսություններ: Ուստի ՄՏԿ-ին կից կուսկոմը մոտավորապես միավորում է 10–15 կիլոմետր շառավիղի վրա գտնվող կոլտնտեսությունները, իսկ մնացած կոլտնտեսություններում կլինեն բջիջներ, վորոնց կմիավորի խոշոր կոլտնտեսության հենակետային բջիջը կամ վորոնք անմիջապես յենթակա կլինեն կուսշրջկոմին:

Մի քանի խոսք շրջանի կողմից գյուղական բջիջներին ցույց տրվելիք դիֆերենցիացիայի յենթարկված ղեկավարության մասին: Ուկրաինայի ներկայացուցիչ ընկ. Շեվչենկոն միանգամայն ճիշտ նշեց շրջանի դիֆերենցիացիայի յենթարկված ղեկավարությունը: Շրջանն ունի պարզորոշ ճյուղեր

—հացահատիկ, բանջարաբուծություն և բամբակ: Կուսշրջկոմը դիֆերենցիացիայի յենթարկված ղեկավարություն պետք է ցույց տա բամբակացան շրջաններին, հացահատիկային շրջանին, բանջարաբուծական շրջանին և այլն: Մինչև անգամ դրավոր դիրեկտիվներն էլ հարկավոր է ուղարկել վոչ թե ընդհանուր՝ բոլոր բջիջների համար, այլ պետք է գրել բամբակացան շրջանի համար մեկ դիրեկտիվ, բանջարաբուծականի համար՝ մի ուրիշը և այլն:

Բջիջների դիֆերենցիացիայի յենթարկված, կոնկրետ ղեկավարությունը ներկայումս շրջկոմների կարևորագույն խնդիրներից մեկն է հանդիսանում: Դա կարևորագույն պայմանն է շրջկոմի ճիշտ ղեկավարության համար:

Ինչ վերաբերում է կուսկոմների քարտուղարների նյութական դրության, ապա այդ հարցը պետք է լուծվի ամենամոտիկ ժամանակում: Ցեսկարծում եմ, վոր բոլոր այն անկանոնությունները, վորը բերեց Կուրսկի շրջանի ընկերն այն մասին, վոր նա ամբողջ

ամսվա ընթացքում աշխատավարձ չի ստանում և հայտնի չէ, թե յերբ կստանա, սպասում է, թե յերբ ԿԿ-ը փող կուղարկի,—բոլոր այդ յերեվույթներն անթույլատրելի յեն: Ցեվ մեղավոր է վոչ թե ԿԿ-ը, վոչ թե նրա ապարատը, այլ մարզային կազմակերպությունները: Կենտրոնական Կոմիտեն ըստ նախահաշվի Կենտրոնական Սևահոդյան մարզի գյուղբնչների քարտուղարների համար բաց է թողնում 200 միավորի հաշվով, իսկ այնտեղ 129 հենակետ գոյություն ունի: (Տեղից—«դրույքը քիչ է»): Հարկավոր է լինում աշխատավարձը բարձրացնել:

Ցեվս մի կարեվորագույն հարց— հենակետերի համար բարտուղարական կազմ պատրաստելու և վերապատրաստելու մասին: Այս հարցը հիմա մեր առաջն է դրված իր ամբողջ ծավալով: Մարզային և յերկրային կոմիտեներն անմիջապես պետք է դնեն հենակետերի քարտուղարների պատրաստման հարցերը: Շրջանային կազմակերպություններն այդ հարցը դլուխ հանել չեն կարող, նրանով պետք է զբաղվեն յերկրային և մարզային կոմիտեները:

Կենտրոնական Կոմիտեի վորոշման համաձայն, բոլոր յերկրներում և մարզերում անց են կացվում 6-ամսյա դասընթացներ շրջանային աշխատողների ուղերով պատրաստելու համար: Բայց, ըստ յերևույթին, այդ վերապատրաստվող աշխատողների մի մասը կդնա հենակետերում աշխատելու: Կլինեն այնպիսի կետեր, հենակետային կուսկոմներ, վորոնք իրենց նշանակությամբ յետ չեն մնա վորոշ շրջաններից: Այդ հենակետերը պետք է ամուր աշխատողների ուղարկել: Պետք է կազմակերպել կուսկոմների բարտուղարների պատրաստման անընդհատ գործող դասընթացներ:

Ահա այն առանձին դիտողությունները, վորը յես կամենում եյի անել ընկերների յերևույթների առթիվ: Ընդհանուր առմամբ գործն առաջ է շարժվում, հենակետեր ստեղծվում են, աշխատանքը կարգի յե ընկնում, գյուղական կուսաշխատանքի կազմակերպչական ձևերը ճշտորոշվում են: Այդ առաջին նշաններն են այն բանի, վոր տեղական կուսկազմակերպություններն ըմբռնել

են հենակետերի նշանակությունը և վոր յերկրային ու մարդային կոմիտեների ողնությամբ հենակետերը կկատարեն այն խնդիրները, վորը նրանց վրա յե դնում ԿԿ-ի վորոշումը:

ՀՀ Ազգային գրադարան
NL0182467

ԳԻՆԸ 8 Կ. (3/4 մ.)

БУЛАТОВ

ОПОРНЫЕ ПУНКТЫ—РЫЧАГИ БОЛЬШЕВИСТСКОГО РУКОВОДСТВА ДЕРЕВНЕЙ

Госиздат ССР Армении
Эривань 1931